Luys Lnyu®

# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ..... 1
   1.1. Արդյունաբերություն ..... 2
   1.2. Շինարարություն ..... 4
   1.3. Ծառայություններ ..... 4
   1.4. Առևտուր ..... 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ ..... 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ..... 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ ..... 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ..... 10
   5.1. Բյուջեի հարկային եկամուտները ..... 10
   5.2. Պետական պարտք ..... 11
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ ..... 12
   6.1. Գնաճ ..... 12
   6.2. Ավանդներ ..... 13
   6.3. Վարկեր ..... 14
   6.4. Դրամական փոխանցումներ ..... 16
7. ԱՄՓՈՓՈՒՄ ..... 17

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության դինամիկան 2024 թվականին հիմնականում իր վրա կրել է նախորդ տարիների բարձր աճեր ապահովող գործոնների աստիճանաբար չեզոքացման ազդեցությունները: Արդյունքում տարին սկսվել է բավական բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշով, որն աստիճանաբար դանդաղել է: Դեկտեմբերին, սակայն, նկատվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) որոշակի արագացում՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների աճի արագացմամբ (որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը դեռևս չի հրապարակվել): Արդյունքում 2024թ. դեկտեմբերին ՏԱՑ-ը կազմել է 4.7%՝ նոյեմբերի համեմատ արագանալով 3.2 տոկոսային կետով, իսկ հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ը կազմել է 8.0% և շարունակել է դանդաղել նախորդ ամիսների կուտակային աճի ցուցանիշների համեմատ:

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %[1]**




2024թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.3 և 2.5 տոկոսային կետ: Արդյունաբերության նպաստումը շարունակել է փոքրանալ՝ հասնելով 1.0 տոկոսային կետի՝ հունվար-նոյեմբերի 1.6-ի փոխարեն: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև շինարարության և գյուղատնտեսության ոլորտները՝ համապատասխանաբար 0.7 և 0.1 տոկոսային կետով:

**Գյուղատնտեսության ոլորտում 2024թ. գրանցվել է 1.6% աճ: Չնայած կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող**

[1] Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:

**բազմաթիվ միջոցառումներին՝ ոչ բավարար արդյունավետ կառավարման պատճառով ոլորտը շոշափելի աճ այդպես էլ չի ունենում:**

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-դեկտեմբերին, տոկոսային կետ**




## 1.1. Արդյունաբերություն

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**




**Արդյունաբերության ոլորտում գրանցվել է կտրուկ անկում:** Պայմանավորված նախորդ տարվա մեծ բազայի առկայությամբ (նախորդ տարվա վերջին ամիսներին ոսկերչական արտադրանքի վերաարտահանման որոշ մասը գրանցվել էր որպես արդյունաբերության աճ)՝ արդյունաբերության ոլորտում 2024թ. դեկտեմբեր ամսին գրանցվել է 14.8% անկում: Հունվար-դեկտեմբեր ամիսների աճի ցուցանիշը նվազել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ՝ 7.6-ից դառնալով 4.7%:

Արդյունաբերության հունվար-նոյեմբեր[2] ամիսների աճը (7.6%) հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության աճով, որի տեմպը շարունակել է դանդաղել: 2024թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մշակող արդյունաբերության աճը կազմել է 10.8% հունվար-հոկտեմբերի 17.3%-ի փոխարեն և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 7.5 տոկոսային կետով, մինչդեռ հունվար-հոկտեմբերի նպաստումը կազմել էր 11.7 տոկոսային կետ: Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտների աճերը՝ համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետով:

Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվում է գրանցվել անկում: Հունվար-նոյեմբերին անկումը կազմել է 8.0%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.4 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճը շարունակել է առավելապես պայմանավորված լինել «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի գործունեությամբ, առանց որի մշակող արդյունաբերության աճը կլիներ գրեթե զրոյական: Մասնավորապես, «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտը հունվար-նոյեմբերին աճել է 84.7%-ով՝ մշակող արդյունաբերությանը նպաստելով 10.7 տոկոսային կետով, իսկ ընդհանուր արդյունաբերությանը՝ 7.4 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «սննդամթերքի արտադրություն», «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են համապատասխանաբար 1.4, 1.2 և 0.7 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաոլորտներ շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, էական են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «խմիչքի արտադրություն», «հագուստի արտադրություն» և «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» ենթաճյուղերի բացասական նպաստումները, որոնք միասին կազմել են 2.7 տոկոսային կետ:

[2] Արդյունաբերության դեկտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի, արդյունաբերության աճը հունվար-նոյեմբերին կկազմեր շուրջ՝ 0.2%:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության աճի տեմպը մնացել է բարձր մակարդակում:** 2024թ. դեկտեմբերին շինարարության աճը կազմել է 12.9%՝ նոյեմբերի համեմատ արագանալով 1.3 տոկոսային կետով, իսկ հունվար-դեկտեմբեր ամիսների աճը կազմել է 14.5%՝ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Շինարարության աճը շարունակում է պայմանավորված լինել բնակելի գույքի շինարարության աճով:

## 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**



**Ծառայությունների աճի տեմպը բավական տատանողական է վերջին ամիսներին և էականորեն վերանայվել է: 2024թ. ծառայությունների աճի գրեթե բոլոր ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից՝ հիմնականում պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայությունների վարչական ռեգիստր վարող՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից 2024-ի տվյալների ճշգրտմամբ: Ընդ որում, ճշգրտումները դեպի վերև են, ինչի արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների ծառայությունների աճի ցուցանիշը նախկինում հրապարակված 6.3%-ից դարձել է 9.7%: Դեկտեմբերի աճը բավական բարձր է եղել՝ կազմելով 19.4% և շուրջ 7.1 տոկոսային կետով բարձր լինելով նոյեմբերի աճից (որն իր հերթին վերանայվել է դեպի վերև 1.9 տոկոսային կետով): Ծառայությունների ոլորտի կտրուկ աճը առավել մանրամասն վերլուծելու համար անհրաժեշտ է ծառայությունների ենթաճյուղերի վերաբերյալ վիճակագրություն, որը կհրապարակվի ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ս.թ. փետրվարի սկզբին:**

Ըստ հունվար-նոյեմբեր[3] ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 20.4%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.4 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտի և SS ոլորտներից, որոնք շարունակել են նվազել՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով համապատասխանաբար 1.7 և 1.3 տոկոսային կետով:

## 1.4. Առևտուր

**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**




[3] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

**Առևտրի աճի տեմպը շարունակում է դանդաղել:** Առևտրի ոլորտում դեկտեմբերին գրանցվել է 10.3% աճ, որը 1.2 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից: Հունվար-դեկտեմբեր ամիսներին առևտրի աճը կազմել է 17.0%՝ հունվար-նոյեմբերի համեմատ դանդաղելով 1.0 տոկոսային կետով:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[4]

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %**




**Արտահանման անկումը էականորեն խորացել է:** 2024թ. դեկտեմբերին արտահանումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 48.6%-ով, ինչի արդյունքում էապես դանդաղել է նաև կուտակային աճը՝ հունվար-դեկտեմբերին կազմելով 53.1%՝ հունվար-նոյեմբերի 74.3%-ի դիմաց: Արտահանման ծավալների անկումը, ինչպես և ՏԱՑ-ի դեպքում, պայմանավորված է նախորդ տարվա բարձր բազայի առկայությամբ:

2024թ. հունվար-նոյեմբեր[5] ամիսներին արտահանման աճը շարունակել է գրեթե ամբողջությամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանմամբ, որն աճել է շուրջ 3.6 անգամ, արտահանման աճին նպաստելով 78.0 տոկոսային կետով (նախորդ ամսվա նպաստումը՝ 101.6 տոկոսային կետ):

Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է

[4] Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[5] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

բավական փոքր՝ 3.7 տոկոսային կետ: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով աճին նպաստումներն ավելի փոքր են կամ բացասական:

Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու վերաարտահանման) ընդհանուր արտահանման անկումը հունվար-նոյեմբերին կազմում է 4.1%:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %**




**Ներմուծման ծավալը նույնպես զգալիորեն նվազել է**: 2024թ. դեկտեմբերին ներմուծումը նվազել է 26.5%-ով՝ նույնպես պայմանավորված ոսկու վերաարտահանման՝ նախորդ տարվա համեմատ ավելի փոքր ծավալներով: Արդյունքում հունվար-դեկտեմբեր ամիսների ներմուծման աճի տեմպը դանդաղել է՝ հասնելով 33.8%-ի՝ հունվար-նոյեմբերի համեմատ նվազելով 8.3 տոկոսային կետով:

2024թ. հունվար-նոյեմբեր ամիսների[6] տվյալներով ներմուծման աճը ևս առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 3.5 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 44.5 տոկոսային կետով:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք», «մանածագործական իրեր» և «տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբի աճերը, որոնք ներմուծման աճին նպաստել են ընդհանուր առմամբ 3.4 տոկոսային կետով: Ներմուծմանն էական բացասական նպաստում է

[6] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, դեկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի գծով ներմուծման 49.9% անկումը՝ ներմուծման աճին հակազդելով 7.4 տոկոսային կետով:

Առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը հաշվի առնելու, ներմուծման ծավալները հունվար-նոյեմբերին նվազել են 3.0 տոկոսային կետով:

## 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

**Աշխատավարձի աճի տեմպը 2024թ. էականորեն զիջել է նախորդ տարվա ցուցանիշին:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 6.4%-ով՝ կազմելով 287,172 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.7%-ով՝ կազմելով 311,848 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձի աճը եղել է ամենաբարձրը՝ 7.9% և կազմել է 224,804 դրամ:

**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-դեկտեմբերին, %**



## 4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**




**ՀՀ դրամի փոխարժեքը 2024թ. ընթացքում հարաբերականորեն կայուն է եղել:** ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2024թ. ընթացքում եղել է բավական կայուն՝ դոլարի համեմատ տատանվելով 387-ից 405 դրամի շրջանակներում, իսկ եվրոյի նկատմամբ՝ 413-ից 441 դրամի միջակայքում՝ երկու արժույթների նկատմամբ էլ արժեզրկվելով 0.1-ական %-ով: Ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը տարեսկզբին եղել է բավական արժևորված, ինչը տարվա ընթացքում մեղմվել է՝ տարեվերջին հասնելով միջինում 9.6%-ի:

# 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[7]

## 5.1. Բյուջեի հարկային եկամուտները

**Պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է:** Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-դեկտեմբերին կազմել է 5.1%՝ հունվար-նոյեմբերի համեմատ դանդաղելով 2.0 տոկոսային կետով: Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-դեկտեմբերին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 7.2%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ 65.7%), շահութահարկի (աճը՝ 4.4%) և պետական տուրքի (աճը՝ 19.3%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.9, 1.8 և 0.6-ական տոկոսային կետ: ԱԱՀ-ի գծով նորից արձանագրվել է բացասական դինամիկա՝ 1.5% անկում, ինչն ընդհանուր հարկերի աճին հակազդել է 0.5 տոկոսային կետով:

**Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %**




[7] ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները 2024թ. դեկտեմբեր ամսվա համար դեռևս չեն հրապարակվել: Հարկային եկամուտների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ՊԵԿ տվյալների հիման վրա: Հարկերի աճերը հաշվարկելիս ցուցանիշներում ներառվել են հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով փոխհատուցված գումարները:

**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

| | 2023թ. հունվար-դեկտեմբեր | | 2024թ. հունվար-դեկտեմբեր | |
|---|---|---|---|---|
| | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ | Աճը, % | Նպաստումը, տոկոսային կետ |
| **Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք** | **15.9** | **15.9** | **5.1** | **5.1** |
| Ավելացված արժեքի հարկ | 12.9 | 4.5 | -1.5 | -0.5 |
| Ակցիզային հարկ | 17.2 | 1.1 | -1.9 | -0.1 |
| Շահութահարկ | 44.3 | 5.0 | 4.4 | 0.6 |
| Պետական տուրք | -36.9 | -2.0 | 19.3 | 0.6 |
| Մաքսատուրք | 32.8 | 0.9 | 1.2 | 0.0 |
| Բնապահպանական և բնօգտագործման վճարներ | -36.8 | -1.8 | 65.7 | 1.8 |
| Այլ հարկեր | 47.1 | 1.4 | -2.6 | -0.1 |
| Շրջանառության հարկ | 28.1 | 0.6 | 16.7 | 0.4 |
| Եկամտային հարկ | 18.6 | 4.9 | 7.2 | 1.9 |
| Սոցիալական վճարումներ | 40.1 | 1.3 | 14.5 | 0.6 |

## 5.2. Պետական պարտք

**2024թ. դեկտեմբերին ՀՀ պետական պարտքի աճի տեմպը դանդաղել է:** Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 12.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճելով 8.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 12.1%): Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 12.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 9.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.1%):

Պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 17.1% աճով, մինչդեռ արտաքին պարտքի (արտահայտված ԱՄՆ դոլարով) ծավալը մնացել է գրեթե նույն մակարդակում:

**2024թ. դեկտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազման միտումը շարունակվել է:** Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքները (եկամտաբերությունը) դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ նվազել են փոքր չափով՝ 0.1 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը մնացել է նույն մակարդակում: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի

տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 1.9 և 1.0 տոկոսային կետով:

**Գծապատկեր 12. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**




## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 6.1. Գնաճ

**Գծապատկեր 13. 12-ամսյա գնաճ, %**




**Գնաճի տեմպը փոքր-ինչ արագացել է, սակայն մնացել է ցածր մակարդակում:** Գնաճի տեմպը դեկտեմբերին հասնել է 1.5%-ի՝ մնալով ԿԲ թիրախից ցածր մակարդակում: 2024թ. միջին գնաճը (հունվար-դեկտեմբեր ամիսների) եղել է ավելի ցածր՝ կազմելով 0.3%: Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկը տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 2.25 տոկոսային

կետով նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը, որը, սակայն, բավարար չի եղել գնաճը թիրախային մակարդակին վերադարձնելու համար:

## 6.2. Ավանդներ

**Գծապատկեր 14. Ավանդների 12-ամսյա աճը, %**




**Ավանդների ծավալի աճի տեմպը տարվա վերջին ամիսներին արագացել է:** Ընդհանուր ավանդների աճը 2024թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 13.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 3.9 տոկոսային կետով: Ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների համապատասխանաբար 15.0% և 10.1% աճերով:

**Գծապատկեր 15. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ**



2024թ. դեկտեմբերին ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 5.3 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 20.9% (նախորդ ամսվա աճը՝ 13.1%)՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 4.4 տոկոսային կետով:

## 6.3. Վարկեր

**Վարկերի աճի տեմպը նույնպես արագացել է:** 2024թ. դեկտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.2%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով:

**Գծապատկեր 16. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**




Վարկերի աճը տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 27.1%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 25.7 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտների վարկերը նվազել են շուրջ 29.1%-ով՝ ընդհանուր վարկերի աճին հակազդելով 1.5 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ոչ ռեզիդենտների և՛ դրամային, և՛ արտարժութային վարկերի նվազմամբ:

**Գծապատկեր 17. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**




Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ տնային տնտեսություններին, և՛ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 29.9% և 24.5%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 14.7 և 12.4 տոկոսային կետով:

**Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[8]**




[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

Դեկտեմբերին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել սպառողական (աճը՝ 33.0%) և հիպոթեքային (աճը՝ 32.9%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 7.1 և 7.0 տոկոսային կետով: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճել են բոլոր ճյուղերում, այդ թվում՝ արդյունաբերության ոլորտում: Ընդ որում, հանքարդյունաբերության ոլորտում վարկերի ծավալը 2024թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ավելի քան կրկնապատկվել է՝ աճելով շուրջ 66.3 մլրդ դրամով: Վերջինս հավանաբար պայմանավորված է Ամուլսարի շահագործման համար տրամադրվող վարկերով:

## 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 19. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար[9]**




**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) ծավալները 2024թ. նախորդ տարվա համեմատ մնացել են ցածր մակարդակում**: 2024թ. հունվար-նոյեմբերին դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է 1.12 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի զուտ ներհոսքից փոքր է շուրջ 24.8%-ով: Զուտ ներհոսքի կրճատումը պայմանավորված է եղել ինչպես ներհոսքի կրճատմամբ, այնպես էլ արտահոսքի աճով:

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2024թ. դեկեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը տարվա ընթացքում դրսևորել է դանդաղման միտում՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարիների բարձր տնտեսական աճ ապահովող գործոնների չեզոքացմամբ:** Նախորդ տարվա աճ ապահովող գործոնների (դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքը, արտահանման աճը և այլն) դրական ազդեցություններն ապահովել են բարձր տնտեսական աճ 2024թ. տարեսկզբին, սակայն աճն աստիճանաբար դանդաղել է նշված գործոնների ազդեցությունների չեզոքացմանը զուգահեռ: Արդյունքում 2024թ. ՏԱՑ-ը կազմել է 8.0%՝ լինելով նախորդ տարվա ՏԱՑ-ից շուրջ 1.8 տոկոսային կետով ցածր: Սակայն **2024թ. ՏԱՑ-ի և ՀՆԱ-ի իրական աճի միջև տարբերությունն ավելի մեծ է եղել, ինչը նշանակում է, որ 2024թ. տնտեսական աճը 2023թ. աճի համեմատ էականորեն ավելի ցածր կլինի:**

**2. 2024թ. տնտեսության կառուցվածքը շարունակել է վատթարանալ:** Ամփոփելով 2024թ. տնտեսական ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ աճի հիմնական շարժիչ ուժերը եղել են առևտուրը (հիմնականում վերաարտահանման որոշ մասի արտացոլման հետևանքով) և ծառայությունները (հիմնականում ֆինանսական ոլորտում): Դա նշանակում է, որ վերոհիշյալ ճյուղերի տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության կառուցվածքում աճել է, մինչդեռ արդյունաբերության (առանց ոսկերչական գործունեության) և գյուղատնտեսության կշիռները նվազել են: Ստացվում է, որ տնտեսությունն ավելի շատ կախվածություն է ձեռք բերել ժամանակավոր գործոններով մղվող աճից, մինչդեռ երկարաժամկետ աճի համար կարևոր գործունեության տեսակների դերը նվազել է:

**3. Արդյունաբերության, ինչպես նաև արտահանման կառուցվածքում նույնպես տեղի են ունեցել բացասական տեղաշարժեր:** Արդյունաբերության կառուցվածքում 2024թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով սննդամթերքի, խմիչքի և հագուստի արտադրության տեսակարար կշիռները (որոնք պատմականորեն կարևոր դեր են ունեցել ՀՀ մշակող արդյունաբերության համար) նվազել են՝ ընդհանուր շուրջ 1.9 տոկոսային կետով, մինչդեռ հիմնական մետաղների արտադրության (հիմնականում ոսկերչական ապրանքների վերաարտահանումն է) կշիռը նույն ժամանակահատվածում էականորեն աճել է 7.1 տոկոսային կետով: Նման իրավիճակ է նաև արտահանման կառուցվածքում:

**4. Տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների համեստ աճերի պայմաններում 2024թ. էականորեն բարձր տեմպով աճել են վարկերի ծավալները:** Հիպոթեքային և սպառողական վարկերը աճել են համապատասխանաբար 32.9% և 33.0%-ով: Հաշվի առնելով բնակչության եկամուտների աճը (մասնավորապես՝ անվանական աշխատավարձերի ընդամենը

6.4% աճը և արտերկրից դրամական փոխանցումների ծավալի նվազումը)՝ վարկերի նման արագությամբ աճը ռիսկեր է պարունակում:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*